ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԱՆ-ՀՄԱԾՁԲ-22/45

ք. Երևան

«23» նոյեմբերի 2022 թ.

ՀՀ արդարադատության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Սիրվարդ Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գրանթ Թորնթոն Քնսալթինգ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գուրգեն Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **16 800 000 (տասնվեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարություն	«Գրանթ Թորնթոն Քնսալթինգ» ՓԲԸ
ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	ՀՀ ք.Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչի 9
Հ/Հ 900011018547	ՀՎՀՀ 00120086
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 02506264	1510045914270100
Գլխավոր քարտուղար	Տնօրեն
Ս. Գևորգյան	Գ. Հակոբյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
«23» նոյեմբերի 2022 թ. կնքված
ՀՀԱՆ-ՀՄԱԾՁԲ-22/45 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
Հ/Հ	Անվանումը և գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափման միավոր	Ընդհանուր քանակը	Ընդհանուր գինը	Մատուցման հասցե	Մատուցման ժամկետ
1	խորհրդատվական ծառայություններ CPV-85311210/10	Տեխնիկական առաջադրանքը ներկայացվում է ստորև	**դրամ**	**1**	**16 800 000**	ՀՀ ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից համաձայն տեխնիկական առաջադրանքի:

Տեխնիկական բնութագիր
Խորհրդատվական ծառայությունների մատուցման

1. Կազմակերպությունը (այսուհետ՝ Խորհրդատու) ուսումնասիրում է ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ Պատվիրատու) և «Մեյսիս ինֆորմեյշն սիսթեմս» ՍՊԸ (այսուհետ՝ Կատարող) միջև 2022 թ. հունիսի 13-ին կնքված թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԾՁԲ-22/30-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր, կցվում է) տեխնիկական բնութագրով և ծառայությունների մատուցման ժամանակացույցով նախատեսվող աշխատանքների ծավալը և իրականացնում պայմանագրի փուլերի ուղեկցում, տալիս ամեն փուլով և դրա բաղադրիչներով մասնագիտական եզրակացություն՝ Պայմանագրի պահանջներին բավարարելու, մասնակի բավարարելու կամ չհամապատասխանելու վերաբերյալ: Մասնագիտական եզրակացությունը հիմք է հանդիսանալու Պատվիրատուի համար Կատարողի ծառայություններն ընդունելու համար:
2. Խորհրդատուն Պատվիրատուի հետ պետք է հստակեցնի առկա կարիքների և տեխնիկական առաջադրանքին վերաբերող իրավական ակտերի շրջանակը:
3. Խորհրդատուն պետք է մշակի և Պատվիրատուի հաստատմանը ներկայացնի աշխատանքների և փաստաթղթերի ուսումնասիրման, քննարկման, գնահատման և ընդունման կարգ:
4. Տեխնիկական առաջադրանքով (այսուհետ ՏԱ) նախատեսված ամեն մի պահանջով Խորհրդատուն մշակվող Կարգում պետք է նախատեսի այն ստուգելու և գնահատելու ցուցանիշներն ըստ հետևյալ աղյուսակի՝

Հ/հ	Պահանջ (նկարագրությունը, նշելով փաստաթուղթը (ՏԱ կամ իրավական ակտ), գլուխ, բաժին, կետ, ենթակետ, պարբերություն)	Ստուգման միջոց (որ փաստաթղթում է ներկայացված, գլուխ, բաժին, կետ, ենթակետ, պարբերություն)	Իրականացման ծավալը (հակիրճ նկարագրությունը)	Մասնագիտական կարծիք 1. բավարարում է, մասնակի է բավարարում, չի համապատասխանում, կամ 2. պետք է ներկայացվի կամ լրամշակվի 2-րդ կամ 3-րդ փուլում, և **3. Եզրակացությունը՝ ենթակա է ընդունման կամ ենթակա չէ ընդունման:**
1.				
2.				
3.				

5. Խորհրդատվական ծառայությունները Խորհրդատուն իրականացնելու է 3 փուլով, որոնք համընկնում են Պայմանագրի ծառայությունների մատուցման ժամանակացույցին (Պայմանագրի մեկնարկը՝ 23.08.2022 թ.)՝

<u>1-ին փուլ</u>

1. Ուսումնասիրել Կատարողի կողմից մանրամասն նախագծով մշակվող և ներկայացվող Համակարգի պահանջների մասնագիրը (specifications) (այսուհետ՝ ՀՊՄ) և տալ գնահատական միջազգային առկա լուծումներին և մոտեցումներին համապատասխանելու, ինչպես նաև Պայմանագրի բոլոր պահանջները բավարարելու վերաբերյալ:
2. Ուսումնասիրել և տալ մասնագիտական կարծիք Կատարողի կողմից ներկայացված Նախնական հաշվետվության վերաբերյալ, որտեղ առանձին գնահատված կլինեն.

2.1. Համակարգի փոխգործելիության գործընթացները,

2.2. Մշակվող համակարգի կողմից նախատեսվող բիզնես գործընթացների և Շահառուների տեխնիկական պահանջների համապատասխանությունը,

2.3. Օգտվողների իրավասությունների ներկայացված նկարագրության և Պատվիրատուի պահանջների համապատասխանությունը,

2.4. տվյալների փոխանակման նկարագրությունը

2.5. տիպային փաստաթղթերի ձևանմուշները (միջնորդություններ, որոշումներ և այլ փաստաթղթեր),

2.6. Նոր համակարգի դիզայնի վերաբերյալ առաջարկը,

2.7. ծրագրային և տեխնիկական առանձնահատկությունները:

<u>2-րդ փուլ</u>

1. Խորհրդատուն Պատվիրատուի հետ միասին պետք է ուղեկցի Կատարողի կողմից բիզնես գործընթացների կառուցման, ՀՊՄ-ով սահմանված և նախորդ փուլում հաստատված ծրագրային ապահովման վերջնական տարբերակի մշակման աշխատանքները,

2. Խորհրդատուն 2-րդ փուլում պետք է իրականացնի Կատարողի կողմից մշակված համակարգի թեստավորում, ինչի նպատակով մինչև 2-րդ փուլի ավարտը Պատվիրատուի հաստատմանը պետք է ներկայացնի համապատասխան թեստավորման պլան:
3. Համակարգի թեստավորման համար պետք է առնվազն կիրառվեն հետևյալ ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ թեստավորման տեսակները.

Հ/Հ	Թեստի տեսակ	Նպատակ
1.	Կոդի թեստավորում Code testing	Իրականացվում է ծրագրավորման ինժեներների կողմից ծրագրային միավորի իրականացման ժամանակ:
2.	Համակարգի թեստավորում System testing	Կիրառվում է արդեն պատրաստ համակարգի ենթագործառույթի ստուգման համար:
3.	Համակարգի միավորի թեստ Unit testing	Կիրառվում է արդեն պատրաստ մեկ միավորի՝ ենթագործառույթի ստուգման համար:
4.	Ինտեգրման թեստ Integration testing	Ուղղված է բացահայտելու տարբեր ենթահամակարգերի և երրորդ կողմի համակարգերի հետ ինտեգրման արդյունքում առաջացած խնդիրները:
5.	Արտադրողականության թեստ Performance testing	Բացահայտում է համակարգի արձագանքները ոչ ստանդարտ և չնախատեսված իրավիճակներում, ինչպես նաև երրորդ կողմերի համակարգերի հետ փոխազդեցության արդյունքում առաջացած համակարգի արտադրողականության խնդիրները:
6.	Բեռնավորման թեստ Load testing	Նպատակն է պարզել համակարգի կարողությունները մեծաքանակ օգտագործողների համաժամանակյա աշխատանքների կամ մեծածավալ տվյալների հոսքի ժամանակ:
7.	Համատեղելիության թեստ Compatibility testing	Գնահատում է համակարգի համատեղելիությունը համակարգչային տարբեր միջավայրների հետ, ներառյալ՝ գործավար համակարգը, սարքաշարը, ցանցային թողունակությունը, տվյալների շտեմարանները և այլն:

8.	Անվտանգության թեստ Security testing	Ստուգում է համակարգի անվտանգությունը, այնտեղ փոխանակվող և պահվող տվյալների ապահովությունն ու մատչելիության վավերականությունը: Ստուգում է համակարգից տվյալների արտահոսքի բացառումը: Գնահատվում է համակարգի խոցելիությունը:
9.	Օգտագործողի ընդունման թեստ User Acceptance Testing (UAT)	Կատարում է Պատվիրատուն՝ Խորհրդատուի բիզնես վերլուծաբանների օգնությամբ՝ համակարգի ամբողջական ֆունկցիոնալությունը վավերացնելու համար: Իրականացվում է ընդհանուր համակարգի կամ դրա որևէ ենթահամակարգի ամբողջական գործարկումից առաջ:

4. Կատարողի կողմից իրականացվող թեստավորման արդյունքները պետք է ներկայացվեն առանձին հաշվետվությամբ:
5. Համակարգի ընդունման նպատակով Խորհրդատուն թեստի արդյունքները դասակարգելու է հետևյալ սկզբունքով.

Արգելափակող (Blocker)	Արգելափակող սխալ, որը բերում է համակարգի աշխատանքի խափանմանը, որի արդյունքում համակարգի կամ դրա հիմնական գործառույթների հետ հետագա աշխատանքն անհնար է դառնում:
Կրիտիկական (Critical)	Կրիտիկական սխալ, որի արդյունքում համակարգի բիզնես տրամաբանությունը սխալ է, առկա է անվտանգության խնդիր, առաջանում է սերվերի խափանում և այլն:
Հիմնարար/կարևոր (Major)	Բիզնես տրամաբանության հիմնական մասը ճիշտ չի աշխատում, թերությունը կրիտիկական չէ, հնարավոր է շարունակել աշխատանքը թեստավորվող համակարգի հետ:
Աննշան (Minor)	Աննշան սխալ, որը չի խախտում թեստավորվող հատվածի բիզնես տրամաբանությունը, օգտվողի միջերեսի ակնհայտ խնդիր:
Չնչին (Trivial)	Չնչին խնդիր, որը չի վերաբերում բիզնես տրամաբանությանը, վատ վերարտադրվող սխալ, որը օգտվողի միջերեսից հիմնականում տեսանելի չէ, երրորդ կողմի գրադարանների, ծառայությունների հետ կապված խնդիր, որը չունի որևէ ազդեցություն համակարգի ընդհանուր որակի վրա:

6. Թեստավորման արդյունքում ներքոնշյալ դեպքերում համակարգը չի ընդունվելու պատվիրատուի կողմից.

- ✓ Արգելափակող (Blocker) որևէ սխալի առկայություն,
- ✓ Կրիտիկական (Critical) որևէ սխալի առկայություն,
- ✓ Հիմնարար/կարևոր (Major) 2 և ավելի սխալի առկայություն, կամ 1 հիմնարար/կարևոր (Major) և 4 և ավելի աննշան (Minor) սխալի առկայություն, կամ 1 հիմնարար/կարևոր (Major) և 7 և ավելի չնչին (Trivial) սխալի առկայություն
- ✓ Աննշան (Minor) 5 և ավելի սխալի առյակություն կամ 4 աննշան (Minor) և 5 և ավելի չնչին (Trivial) սխալի առկայություն
- ✓ Չնչին (Trivial) 10 և ավելի սխալի առյակություն
- ✓ Իրական միջավայրում թարմացման արդյունքում այլ համակարգում կամ նույն համակարգի այլ գործառույթում և (կամ) հատկանիշում սխալի առկայություն:

3-րդ փուլ

1. Խորհրդատուն պետք է ուսումնասիրի Կատարողի կողմից մշակված Համակարգից օգտվողների վերապատրաստման ծրագիրը և ներկայացնի մասնագիտական կարծիք դրա կիրառելիության վերաբերյալ:
2. Խորհրդատուն պետք է Պատվիրատուի հետ ուղեկցի Կատարողի կողմից նոր համակարգի օգտատերերի վերապատրաստման գործընթացները, անհրաժեշտության դեպքում ներկայացնի մասնագիտական խորհրդատվություն:
3. Խորհրդատուն պետք է ներկայացնի մասնագիտական կարծիք, որ Համակարգի տեխնիկական բնութագրերն ու գործառույթները համապատասխանում են 1-ին փուլի փաստաթղթերի և Համակարգի մշակման շրջանակներում պատրաստված և հաստատված այլ փաստաթղթերի պահանջներին:
4. Խորհրդատուն պետք է մշակի և Պատվիրատուին ներկայացնի Համաձայնագրի նախագիծ, որի ստորագրումով Կատարողի կողմից կիրականացվի Համակարգի և դրա բոլոր բաղկացուցիչ տարրերի նկատմամբ բոլոր մտավոր սեփականության իրավունքների (այդ թվում՝ հեղինակային և արտոնագրային իրավունքի օբյեկտների նկատմամբ գույքային բացառիկ իրավունքների) զիջում Պատվիրատուին՝ առանց լրացուցիչ փոխհատուցման:
5. Խորհրդատուն պետք է ուսումնասիրի Կատարողի կողմից մշակված և 3-րդ փուլում լրամշակված Համակարգի նկատմամբ անվտանգության պահանջները և տրամադրի կարծիք՝ այն Պատվիրատուի կողմից հաստատելու համար:
6. Խորհրդատուն մինչև 2-րդ փուլի ավարտը պետք է Պատվիրատուի հաստատմանը ներկայացնի աշխատանքային պլան, որով կառաջադրվի Որակի պրոֆիլը, ինչն էլ կօգտագործվի «Համակարգի սկզբնաղբյուր կոդերի վերլուծություն» իրականացնելիս: Խորհրդատուն այդ պլանում պետք է նաև նշի, թե որ ծրագրային ապահովման (ճարտարապետական) որակի հատկանիշներն է նա օգտագործելու Համակարգի ծրագրային կոդերի որակը նկարագրելու համար:
7. Խորհրդատուն պետք է իրականացնի Կատարողի կողմից ներկայացվող Ավարտական հաշվետվության ուսումնասիրություն և մասնագիտական կարծիքի ներկայացում:
8. Խորհրդատուն պետք է իրականացնի Համակարգի ամբողջական սկզբնաղբյուրի կոդի (source codes) ուսումնասիրություն՝ համաձայն հաստատված աշխատանքային պլանի և ներկայացնի հաշվետվություն:

9. Խորհրդատուն մինչև 3-րդ փուլի ավարտը կմշակի և Պատվիրատուին կներկայացնի Համաձայնագրի նախագիծ, որի ստորագրումով Կատարողն կիրականացնի համակարգի երաշխիքային սպասարկումը,

Խորհրդատվական ծառայությունների մատուցման արդյունքում վճարումներն իրականացվելու են հետևյալ սկզբունքով.

Մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվելու է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա: Ընդ որում, մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը մատուցված և Պատվիրատուի կողմից ընդունված ծառայության արդյունքի դիմաց վճարումը կիրականացվի մինչև 2022թ. դեկտեմբերի 28-ը: Ծառայությունը 2023 թվականին մատուցվելու դեպքում ծառայության դիմաց վճարումը կիրականացվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև կնքվելիք վճարման ժամանակացույցով նախատեսված ժամկետում:

1-ին փուլ՝ Պայմանագրի գնի 20 % - վճարվելու է Կատարողի կողմից թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԾՁԲ-22/30-1 պայմանագրի 1-ին փուլի աշխատանքների վերաբերյալ մասնագիտական եզրակացության տրամադրումից հետո:

2-րդ փուլ՝ Պայմանագրի գնի 40 % - վճարվելու է Կատարողի կողմից թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԾՁԲ-22/30-1 պայմանագրի 2-րդ փուլի աշխատանքների վերաբերյալ մասնագիտական եզրակացության տրամադրումից հետո:

3-րդ փուլ՝ Պայմանագրի գնի 40 % - վճարվելու է Կատարողի կողմից թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԾՁԲ-22/30-1 պայմանագրի 3-րդ փուլի աշխատանքների վերաբերյալ մասնագիտական եզրակացության տրամադրումից հետո:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարություն	«Գրանթ Թորնթոն Քնսալթինգ» ՓԲԸ
ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	ՀՀ ք.Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչի 9
Հ/Հ 900011018547	ՀՎՀՀ 00120086
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 02506264	1510045914270100
Գլխավոր քարտուղար	Տնօրեն
_____ Ս. Գևորգյան	_____ Գ. Հակոբյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 2
«23» նոյեմբերի 2022 թ. կնքված
ՀՀԱՆ-ՀՄԱԾՁԲ-22/45 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Անվանումը և գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**			
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	խորհրդատվական ծառայություններ CPV-85311210/10	4235	---	16 800 000	16 800 000	**16 800 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կ.Սարգսյան 3/8
Հ/Հ 900011018547
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02506264
Գլխավոր քարտուղար

_____ ***Ս. Գևորգյան***
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Գրանթ Թորնթոն Քնսալթինգ» ՓԲԸ
ՀՀ ք.Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչի 9
ՀՎՀՀ 00120086
«Արարատբանկ» ԲԲԸ
1510045914270100
Տեղեն

_____ ***Գ. Հակոբյան***
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված 3
«23» նոյեմբերի 2022 թ. կնքված
ՀՀԱՆ-ՀՄԱԾՁԲ-22/45 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«23» նոյեմբերի 2022 թ. կնքված
ՀՀԱՆ-ՀՄԱԾՁԲ-22/45 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն